

1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Բնակչության դրամական եկամուտները 2002թ. հունվար-փետրվարին կազմել են 89004.8 մլն.դրամ, իսկ դրամական ծախսերը՝ 95346.4 մլն.դրամ: Դրանց աճի տեմպերը 2001թ. հունվար-փետրվարի համեմատ համապատասխանաբար կազմել են՝ 101.5% և 97.2 %:

Բնակչության դրամական եկամուտների ընդհանուր ծավալից 2002թ. հունվար-փետրվարին ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար բնակչությունը ծախսել է 83898.3 մլն.դրամ (94.3%), պարտադիր վճարումների և կամավոր մուծումների վճարման համար՝ 4743.3 մլն.դրամ (5.3%): Ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունները նվազել են 1127.4 մլն.դրամով:

Դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքում 2002թ. հունվար-փետրվարին 2001թ. հունվար-փետրվարի համեմատությամբ սպառողական ծախսերի տեսակարար կշիռն աճել է 5.8 տոկոսային կետով, իսկ ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելաճի տեսակարար կշիռը նվազել է 12.0 տոկոսային կետով:

Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2002թ. հունվար-փետրվարին 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ աճել են 0.1%-ով:

Աշխատանքի վարձատրություն: 2002թ. հունվար-փետրվարին, ըստ յուրաքանչյուր ամիս վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9000 սուբյեկտների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, զբաղվածների միջին անվանական աշխատավարձը կազմել է 23607 դրամ և 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել 8.9%: Ընդ որում, բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4000 բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա կազմել է 14450 դրամ և 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել 2.5%, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը համապատասխանաբար 31887 դրամ և 14.4 %:

2001թ. հունվարին անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	%-ով նախորդ տարվա նկատմամբ
Ընդամենը	23565	100	108.7
Արդյունաբերություն	38815	164.7	124.3
Գյուղատնտեսություն	19157	81.3	135.8
Անտառտնտեսություն	11945	50.7	107.4
Տրանսպորտ	41161	174.7	127.2
Կապ	49050	208.1	119.9
Շինարարություն	35412	150.3	88.2
Առևտուր, հանրային սնունդ	10188	43.2	103.9
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում	27604	117.1	113.6
Հաշվողական տեղեկատվական սպասարկում	18577	78.8	106.3
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	12744	54.1	95.4
Կրթություն	12363	52.5	96.0
Մշակույթ	11011	46.7	107.7
Արվեստ	12927	54.9	123.2
Գիտություն և գիտական սպասարկում	17919	76.0	95.6

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	%-ով նախորդ տարվա նկատմամբ
Վարկավորում և ապահովագրություն	71696	304.2	107.1
Կառավարման ապարատ	34709	147.3	102.9
Այլ	23936	101.6	102.5

2002թ. հունվարին անվանական միջին աշխատավարձը բարձր էր հատկապես վարկավորման համակարգում՝ ընդհանուր միջինը գերազանցել է 3.0 անգամ, , կապի համակարգում՝ 2.1, տրանսպորտի՝ 1.7, արդյունաբերության մեջ՝ 1.6, շինարարության ոլորտում և կառավարման համակարգում՝ 1.5, բնակարանային-կոմունալ տնտեսության և կենցաղսպասարկման ոլորտում՝ 1.2 անգամ:

Սոցիալական ոլորտի ճյուղերում զբաղվածների անվանական միջին աշխատավարձը տատանվել է ընդհանուր միջինի 46.7 (մշակույթ) – 54.9 (արվեստ) %-ի սահմաններում: